Հայաստանի և Ճապոնիայի կառավարությունների միջև
Հակահրդեհային սարքավորումների բարելավման ծրագրի բացման
հանդիսավոր արարողությունը

2019 թ. մայիսի 6-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում տեղի ունեցավ Ճապոնիայի և ՀՀ կառավարությունների միջև Հակահրդեհային սարքավորումների բարելավման ծրագրի բացման հանդիսավոր արարողությունը: Սա 1,540,000,000 ճապոնական իեն (մոտավորապես 13,750,000 ԱՄՆ դոլար) արժողությամբ, Ճապոնիայի կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր է, որն ուղղված է Հայաստանում աղետների կանխման առաջնային շրջաններ հանդիսացող Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերի փրկարարական ստորաբաժանումների տեխնիկական հագեցման համար հրշեջ մեքենաներ ձեռք բերելուն:

Արարողությունը տեղի ունեցավ ճապոնական կողմից ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության Վրաստանի գրասենյակի մշտական ներկայացուցիչ պարոն Յուկիհիկո Էջիրիի և կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ: Հայկական կողմից արարողությանը մասնակցեցին ՀՀ վարչապետ պարոն Նիկոլ Փաշինյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար պարոն Ֆելիքս Ցոլակյանը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար պարոն Հակոբ Արշակյանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար պարոն Սուրեն Պապիկյանը, ԱԱԾ տնօրեն Արթուր Վանեցյանը, ԱԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը, ոստիկանապետ Վալերի Օսիպյանը, ՀՀ արտաքին գործերի փոխնախարար պարոն Ավետ Ադոնցը, Շիրակի մարզպետ պարոն Տիգրան Պետրոսյանը, Լոռու մարզպետ պարոն Անդրեյ Ղուկասյանը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

Արարողության ընթացքում հնչեցին Ճապոնիայի և Հայաստանի օրհներգերը: Երկու կողմերի ելույթներին հաջորդեց ցուցադրված 14 հրշեջ սարքավորումների դիտումը, հրշեջ տեխնիկայի բացազատումը և ջրային շիթերի ցուցադրումը, ինչպես նաև Ճապոնիայի կողմից Հայաստանին օգնության կապակցությամբ թողարկված նամականիշերի մարումը՝ խաչքարի դիմաց:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար պարոն Ֆելիքս Ցոլակյանը (նկարի ձախ մասում)

ՀՀ ԱԻՆ նվագախումբը կատարում է երկու երկրների օրհներգերը

ՀՀ վարչապետ պարոն Նիկոլ Փաշինյանի ելույթը



Դեսպան Ցամադայի հայերեն ելույթը

Հրշեջ սարքավորումների ցուցադրումը

Արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջները

Վարչապետը դիտում է ջրային շիթերի ցուցադրումը

Վարչապետը և արտակարգ իրավիճակների նախարարը դիտում են սարքավորումները

Մասնակիցները ստորագրում են նամականիշերը